ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 23 » մարտի 2017թ. N 13-Լ(Գ)

Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի գ) կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետի ա) ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական ակտերի փորձաքննության և դատական ներկայացուցչության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 30-2.3-150) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2017 թվականի մարտի 22-ի եզրակացությունը և Մ. Պետրոսյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մարիա Սուրիկի Պետրոսյանին 2017 թվականի մարտի 23-ից նշանակել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական ակտերի փորձաքննության և դատական ներկայացուցչության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 30-2.3-150) պաշտոնում՝ լուծելով իրավաբանական վարչության իրավական ակտերի փորձաքննության և դատական ներկայացուցչության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 30-2.3-150) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2015 թվականի փետրվարի 3-ին կնքված N 1 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքային ցուցակի:

Մ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ